Եւ ի նոյն ժամու գնացեալ և լացեալ զանկատիւ առ Ղալֆան եթէ Զորս գիտէաք բարեկամ՝ տես թէ ի՞նչ արարին։ Ի կնունք էաք Ֆէհրդի որդոյ։

Եւ Բշի (8 Փեբր.) երեկոյին ի պատիւ Ծառուկի։

Ուրբաթ օրս (12 Փեբր.) ջհուա գող մի ըմբռնեալ ընդ որդովն և հրամայեաց փաշան կախել, և տարեալ ի սահմանս Հրէիցն, որ Մէյտանճըք ասի, կախեցին և զորդին եդին ի նաւս պատերազմին։ Եւ զայս տեսեալ Հրէիցն՝ գրոհ տվեալ ի ժողովրդանոցն, խորհուրդ ա-բարեալ և գնացեալ տվեալ դրամս փաշային, և նոյն ժամայն իջուցին զնա և թաղեցին։ Այս էր ջան՝ զի մի աղճատեսցի անուն ազգին, զի յանպատրաստութեան կալն, զայն հրէան եկեալ ի Նիկոմիդեայ ի փա-խըստենէն, որ գնացեալ էր ասի և եկեալ թէ տեսցէ զորդիսն և զկինն և դարձցի յերկիրս հեռաւորս, և կալան զնա՝ վասն որոյ և կախեցին։

Փետրուարի ԻԱ. բարեկենդան. ԻԳ Ճումազլ ախըր։

Դշի առաւօտուս (24 Փեբր.) հիւանդացաւ Տէր-տէրն. և Զշի (26 Փեբր.) ոչ գնացի ի խանութ վասն հիւանդութեանն, և Կիրակի (28 Փեբր.) արուն առաք և բարեկամք և սիրելիք գային և երթային հանապա-զօր, սակայն ախտ ցաւոյն սաստկացեալ լինէր, մինչեւ կարդացաք առ Աստուած մեծաւ յուսով, և Սուրբ Թորոսի Շաբաթ օր (6 Մարտ) հաղորդեցաւ և յետ Գ ժամու քրտինք բղխեաց մինչ Բշի (8 Մարտ), և ապա սակաւ սակաւ նուաստացաւ ցաւն մինչ Մարտի Ը յեր-բորդում շաբաթու պահոցն, և ապա օրս գնացի ի խա-նութ։ Վասն որոյ և այսմ զբաղմանց խափանեցաւ իր գրոյս, բայց փոքր ի շատէ զոր երթեալ նստէաք մերձ առ իշխանսն՝ լսէաք զոր լինէրն։

Եւ յաւուրս յայսմիկ կեօնճիք գնացեալ առ փա-